

Գլխավոր տեղեկություն

|                          |                                                     |
|--------------------------|-----------------------------------------------------|
| Համար                    | N<br>02/177                                         |
| Տիպ                      | Հրաման                                              |
| Ակտի<br>տիպ              | Պաշտոնական Ինկորպորացիա (14.09.2002-<br>12.06.2003) |
| Կարգավիճակ               | Չի<br>գործում                                       |
| Սկզբնաղբյուր             | ՀՀԳՏ 2001.04.23/9(72)<br>Հոդ.52                     |
| Ընդունող մարմին          | Պետական եկամուտների<br>նախարարություն               |
| Ընդունման ամսաթիվ        | 15.02.2001                                          |
| Ստորագրող մարմին         | Պետական եկամուտների<br>նախարար                      |
| Ստորագրման ամսաթիվ       | 15.02.2001                                          |
| Ուժի մեջ մտնելու ամսաթիվ | 28.04.2001                                          |
| Ուժը կորցնելու ամսաթիվ   | 11.08.2006                                          |

124.02/177.15.02.01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

15 փետրվարի  
2001 թ.  
ք. Երևան

N 02/177

Հ Ր Ա Մ Ա Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԻՆՍԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՓՈԽՆՄԲՈՒՄԱՆ ՀՈՒՇԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ, ՄԱՔՍԱՅԻՆ ԵՎ ՊԱՐՏԱԴՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ» ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի «գ» կետը և 38 հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության անունից կնքված և վավերացված միջազգային պայմանագրերով սահմանված հարկային արտոնությունների կիրառումը կարգավորելու նպատակով

Հրամայում եմ

Հաստատել «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լինսի հիմնադրամի միջև կնքված փոխըմբռնման հուշագրով նախատեսված հարկային, մաքսային և պարտադիր վճարների գծով արտոնությունների կիրառման» հրահանգը:

Հայաստանի Հանրապետության  
պետական եկամուտների  
նախարար՝

Ա. Մանուկյան

Հաստատված է  
ՀՀ պետական եկամուտների նախարար՝  
Ա. Մանուկյան  
N 02/177 հրաման 15.02.2001 թ.

Համաձայնեցված է  
ՀՀ ֆինանսների և եկոնոմիկայի  
նախարար՝  
Վ. Խաչատրյան

## Հ Ր Ա Հ Ա Ն Գ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԻՆՍԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՓՈԽՆՄԱՐՈՒՄԱՆ ՀՈՒՇԱԳՐՈՎ ԼԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ, ՄԱՔՍԱՅԻՆ ԵՎ ՊԱՐՏԱԴՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ**

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի «գ» կետը՝ Հայաստանի Հանրապետության անուանից կնքված և վավերացված միջազգային պայմանագրերով սահմանված հարկային արտոնությունների կիրառումը, օրենքի 38 հոդվածին համապատասխան կարգավորելու նպատակով՝ սույն հրահանգը նպատակ ունի կանոնակարգել Հայաստանի Հանրապետության կառավարության և Լինսի հիմնադրամի միջև կնքված փոխըմբռնման հուշագրով (այսուհետ՝ հուշագիր) նախատեսված հարկային, մաքսային և պարտադիր վճարների գծով արտոնություններից օգտվելու հետ կապված հարաբերությունները:

1. Սույն հրահանգը չի սահմանափակում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հարկային, մաքսային և պարտադիր վճարների գծով նախատեսված արտոնությունները:

2. Հուշագրով սահմանված արտոնություններից օգտվում են.

2.1 Հուշագրի շրջանակներում ծրագրեր (այսուհետ՝ ծրագրեր) իրականացնողները՝ Լինսի հիմնադրամը, նրա լիազոր(ներ)ը (աշխատակից(ներ)ը, խորհրդատու(ներ)ը, կապալառու(ներ)ը) և այլն), նշանակված(ներ)ը և (կամ) ծրագրի ղեկավարը, որոնք ՀՀ քաղաքացի(ներ) չեն (կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված չեն) և աշխատում են ծրագրերից որևէ մեկի վրա:

2.2 Հուշագրի շրջանակներում ծրագրեր իրականացնող գրասենյակները, ինչպես նաև Լինսի հիմնադրամի կողմից ֆինանսավորվող (այդ թվում՝ շնորհների տեսքով)՝ ծրագրեր իրականացնող անձինք:

2.3 Սույն հրահանգի 2.1 և 2.2 ենթակետերում նշված անձանց ապրանքներ մատակարարող և ծառայություններ մատուցող (ծեռնարկատիրական գործունեություն վարող օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված) անձինք՝ ծրագրի շրջանակներում մատակարարվող ապրանքների և մատուցվող ծառայությունների մասով:

3. Հուշագրի շրջանակներում իրականացվող ծրագրերի հետ կապված վերգետնյա տրանսպորտային միջոցների Հայաստանի Հանրապետություն մուտքը ազատված է ճանապարհային և բնապահպանական վճարներից, իսկ օդային տրանսպորտի մուտքը՝ ընդունման և սպասարկման վճարներից:

4. Սույն հրահանգի համաձայն արտոնությունները նշանակում են.

4.1 Հուշագրի շրջանակներում իրականացվող ծրագրերի գծով, հրահանգի 2.1 ենթակետում նշված անձանց կողմից՝

ա) Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներմուծումը ազատվում է ավելացված արժեքի հարկից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մաքսային մարմինների կողմից գանձվող հաստատագրված վճարներից, մաքսատուրքից, մաքսավճարից և պարտադիր այլ վճարներից,

բ) ՀՀ տարածքում ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը (այդ թվում՝ անհատույց կամ մասնակի հատուցմամբ) ազատվում է ավելացված արժեքի հարկից:

4.2 Հրահանգի 2.1 ենթակետում նշված անձինք ազատվում են՝

ա) շահութահարկից,

բ) եկամտահարկից,

գ) ոչ ռեզիդենտին վճարվող եկամուտներից՝ աղբյուրի մոտ պահվող հարկը (շահութահարկը, եկամտահարկը) պահելու պարտավորությունից:

5. Հրահանգի 2.2 ենթակետում նշված անձանց կողմից ծրագրերի շրջանակներում՝

ա) Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներմուծումը ազատվում է ավելացված արժեքի հարկից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մաքսային մարմինների կողմից գանձվող հաստատագրված վճարներից, մաքսատուրքից և մաքսավճարից,

բ) ՀՀ տարածքում ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը (այդ թվում՝ անհատույց կամ մասնակի հատուցմամբ) ազատվում է ավելացված արժեքի հարկից:

6. Հրահանգի 2.3 ենթակետում նշված անձինք ազատվում են ծրագրի շրջանակներում հրահանգի 2.1 և 2.2 ենթակետերում նշված անձանց մատակարարվող ապրանքների և մատուցվող ծառայությունների (այդ թվում՝ անհատույց կամ մասնակի հատուցմամբ) գծով ավելացված արժեքի հարկից:

Հրահանգի 2.3-րդ ենթակետում նշված անձանց կողմից՝ ծրագրի շրջանակներում իրականացվող շինարարական և հարակից (նախագծային, հետազոտական և այլն) աշխատանքների մի մասը՝ հրահանգի 2.1-րդ կամ 2.2-րդ կետում նշված անձանց հետ համաձայնեցված՝ գրավոր պայմանագրի հիման վրա այլ անձանց (ենթակապալառուներին) վերահանձնարարելու դեպքում, այդ աշխատանքները ևս ազատվում են ԱՎՀ-ից: Սույն մասում նշված արտոնությունը գործում է մինչև 2003 թվականի նոյեմբերի 1-ը կատարած աշխատանքների մասով:

**(6-րդ կետը լրաց. 08.08.02 N 02/1083-Ն)**

7. Սույն հրահանգում նշված արտոնությունների կիրառման համար հիմք են ընդունվում հուշագրի շրջանակներում իրականացվող ծրագրերի գծով գործարքների կատարումը հիմնավորող սահմանված կարգի փաստաթղթերը (պայմանագիր, հաշվարկավճարային փաստաթղթեր, համապատասխան բեռնամաքսային հայտարարագիր և այլն), ինչպես նաև հրահանգի 1 կամ 2 հավելվածներում բերված տեղեկանքները:

Հուշագրի շրջանակներում իրականացվող ծրագրերի գծով նախատեսված հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների մասով արտոնությունների կիրառման համար սույն հրահանգի 1 կամ 2 հավելվածներում բերված տեղեկանքների առկայությունը պարտադիր է: Արտոնությունների կիրառման համար հիմք հանդիսացող՝ հրահանգի 1 հավելվածում բերված տեղեկանքը տրվում է սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և եկոնոմիկայի նախարարության պատասխանատու անձի կողմից՝ բացառությամբ բիտումի ներմուծման դեպքերի,

իսկ հրահանգի 2 հավելվածում բերված տեղեկանքը՝ ծրագիր իրականացնող անձանց կողմից՝ հրահանգի 8 կետում նշված և բխումի ներմուծման դեպքերում:

**(7-րդ կետը լրաց. 28.08.02 N 02/1188-Ն)**

8. Հուլիսի 2 շրջանակներում իրականացվող ծրագրերի գծով, սույն հրահանգի 2.1 ենթակետում նշված անձանց համար սահմանված կարգով նախատեսված պահպանման ծախսերի շրջանակներում ապրանքների ձեռքբերման կամ ծառայությունների ստացման դեպքերում հրահանգի 2 հավելվածում բերված տեղեկանքը հաստատում է Լինսի հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչությունը, եթե ձեռքբերվող ապրանքների կամ ստացվող ծառայությունների արժեքը (ներառյալ անուղղակի հարկերը) յուրաքանչյուր միանվագ գործարքի մասով չի գերազանցում 200 հազ. դրամը:

Ծրագրեր իրականացնող գրասենյակները իրենց համար սահմանված կարգով նախատեսված պահպանման ծախսերի շրջանակներում ապրանքների ձեռքբերման կամ ծառայությունների ստացման դեպքերում իրավասու են հրահանգի 2 հավելվածում բերված տեղեկանքը հաստատել ինքնուրույնաբար, եթե ձեռքբերվող ապրանքների կամ ստացվող ծառայությունների արժեքը (ներառյալ անուղղակի հարկերը) յուրաքանչյուր միանվագ գործարքի մասով չի գերազանցում 200 հազ. դրամը:

Սույն կետում նշված անձանց համար սահմանված կարգով նախատեսված պահպանման ծախսերի շրջանակներում ապրանքների ներմուծման դեպքում հրահանգի 2 հավելվածում բերված տեղեկանքը հաստատվում է, համապատասխանաբար, Լինսի հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության կամ ծրագրեր իրականացնող գրասենյակների կողմից, եթե ներմուծվող ապրանքների արժեքը չի գերազանցում 200 հազ. դրամը: Այդ նպատակով, ներմուծվող ապրանքների արժեքի որոշման համար հիմք են ընդունվում (տվյալ) ապրանքների հաշվարկային (բեռնառաքման) կամ վճարային փաստաթղթերը: Նշված փաստաթղթերը չներկայացնելու կամ սահմանված կարգով չհիմնավորելու դեպքում հիմք է ընդունվում մաքսային մարմինների կողմից սահմանված կարգով որոշված մաքսային արժեքը:

Սույն կետում նշված տեղեկանքը կազմվում է 4 օրինակից, որի բնօրինակը և երկու պատճենը տրվում են հարկից ազատված ապրանքներ մատակարարող և ծառայություններ մատուցող անձանց, իսկ մեկ պատճենը պահվում է ծրագրեր իրականացնող անձանց մոտ:

Ապրանքների ներմուծման դեպքում մաքսային մարմիններին տրվում է միայն տեղեկանքի բնօրինակը:

Հարկից ազատված ապրանքներ մատակարարող և ծառայություններ մատուցող անձանց կողմից տեղեկանքների երկու պատճենները (ապրանքների ներմուծման դեպքում՝ հարկից ազատված ներմուծող անձանց կողմից տեղեկանքի երկու պատճենները) յուրաքանչյուր եռամսյակ, մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը ներկայացվում են այդ անձանց հաշվառման համապատասխան տարածքային հարկային տեսչություն: Տարածքային հարկային տեսչությունները մեկամսյա ժամկետում տեղեկանքների մեկ պատճենը ուղարկում են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն:

Արտոնությունները կիրառվում են այն գործարքների (գործառնությունների) գծով, որոնց վերաբերյալ տեղեկանքները սահմանված կարգով լրացվել և ներկայացվել են համապատասխան տարածքային հարկային տեսչություն:

9. Հուլիսի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատված ապրանքներ մատակարարող և ծառայություններ մատուցող անձինք (այդ թվում՝ ծրագրեր իրականացնողները և ծրագրեր իրականացնողներին ապրանքներ մատակարարող և ծառայություններ մատուցող անձինք) այդ ապրանքների և ծառայությունների գծով հարկային հաշիվ չեն լրացնում (լրացնում են սահմանված կարգի այլ հաշվարկային և վճարային փաստաթղթեր): Այդ անձանց կողմից հարկային հաշիվ լրացնելու դեպքում՝ հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարը վճարվում է բյուջե՝ սահմանված ընդհանուր կարգով:

10. Ծրագիր իրականացնող անձինք Հայաստանի Հանրապետության ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս ղեկավարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

11. Սույն հրահանգի 1 և 2 հավելվածներում բերված տեղեկանքների առկայությունը պարտադիր է հրահանգի սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո մատակարարված (ներմուծված) ապրանքների կամ մատուցված ծառայությունների գծով:

Հավելված 1  
«Հայաստանի Հանրապետության կառավարության և Լինսի հիմնադրամի միջև կնքված փոխըմբռնման հուլիսի 2-ի համաձայնագրով նախատեսված հարկային, մաքսային և պարտադիր վճարների գծով արտոնությունների կիրառման» հրահանգի

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N .....  
..... 2001 թ.

Սույնով հաստատվում է, որ

.....  
(Ծրագիր իրականացնող կամ վերջինիս կողմից ֆինանսավորվող պատվիրատու կազմակերպության անվանումը, հասցեն և ՀՎՀՀ)

ՀՀ կառավարության և Լինսի հիմնադրամի միջև փոխըմբռնման հուլիսի 2-ի համաձայնագրով նախատեսված ծրագրերի շրջանակներում

.....  
(հուլիսի 2 շրջանակներում իրականացվող ծրագրի անվանումը)

.....  
(մատակարար (կապալառու) կազմակերպության լրիվ անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ անուն, ազգանունը)

գրանցված .....  
(մատակարարի (կապալառուի) կամ անհատ ձեռնարկատիրոջ իրավաբանական հասցեն, ՀՎՀՀ)

.....  
(ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման հիմքերը (պայմանագիրը, հաշվարկա-վճարային փաստաթղթերը)

**ծեռք է բերում**

.....  
(մատակարարվող ապրանքների, մատուցվող ծառայությունների համառոտ նկարագրությունը)

.....  
(մատակարարվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների քանակը (ծավալը) և ընդհանուր արժեքը)

Մատակարարված ապրանքների (մատուցված ծառայությունների) դիմաց վճարումը կատարվում է ՀՀ կառավարության և Լինսի հիմնադրամի միջև կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում իրականացվող ծրագրերի համար հատկացված միջոցների հաշվին:

Լինսի հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչություն  
կամ ծրագիր իրականացնող գրասենյակի  
պատասխանատու անձ

.....  
(ստորագրություն, անուն, ազգանուն)  
Կ. Տ. (դրոշմակնիք)

Լինսի հիմնադրամի կողմից  
Ֆինանսավորվող պատվիրատու  
կազմակերպության պատասխանատու անձ

.....  
(ստորագրություն, անուն, ազգանուն)  
Կ. Տ. (դրոշմակնիք)

ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության  
պատասխանատու անձ

.....  
(ստորագրություն, անուն, ազգանուն)

**Հավելված 2**  
«Հայաստանի Հանրապետության կառավարության և  
Լինսի հիմնադրամի միջև կնքված փոխըմբռնման  
հուշագրով նախատեսված հարկային, մաքսային և  
պարտադիր վճարների գծով արտոնությունների  
կիրառման» հրահանգի

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N .....**  
..... 2001 թ.

Սույնով հաստատվում է, որ

.....  
(ծրագիր իրականացնող գրասենյակի անվանումը, հասցեն և ՀՎՀՀ)

ՀՀ կառավարության և Լինսի հիմնադրամի միջև կնքված փոխըմբռնման հուշագրի  
շրջանակներում իրականացվող ծրագրերի գծով գրասենյակի պահպանման ծախսերի  
շրջանակներում`

.....  
(հուշագրի շրջանակներում իրականացվող ծրագրի անվանումը)

.....  
(մատակարար (կապալառու) կազմակերպության լրիվ անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ անուն, ազգանունը)

գրանցված .....  
(մատակարարի (կապալառուի) կամ անհատ ձեռնարկատիրոջ իրավաբանական հասցեն, ՀՎՀՀ)

.....  
(ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման հիմքերը (պայմանագիրը, հաշվարկա-վճարային փաստաթղթերը)

**ծեռք է բերում (ներմուծում է)**

.....  
(մատակարարվող (ներմուծվող) ապրանքների, մատուցվող ծառայությունների համառոտ նկարագրությունը)

.....  
(մատակարարվող (ներմուծվող) ապրանքների կամ մատուցվող ծառայությունների քանակը (ծավալը) և ընդհանուր արժեքը)

Մատակարարված ապրանքների (մատուցված ծառայությունների) դիմաց վճարումը կատարվում է ՀՀ կառավարության և Լինսի հիմնադրամի միջև կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում իրականացվող ծրագրերի համար հատկացված միջոցների հաշվին:

Լինսի հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչություն  
կամ ծրագիր իրականացնող գրասենյակի  
պատասխանատու անձ

.....  
(ստորագրություն, անուն, ազգանուն)  
Կ. Տ. (դրոշմակնիք)

**Գրանցված է**  
Հայաստանի Հանրապետության

արդարադատության նախարարության կողմից  
26 մարտի 2001 թ.  
Պետական գրանցման թիվ 12401067